Փ

ՓԱՇԱՄԵԼԷՔ ԵՐԶՆԿԱՑԻ.— 1641 թուին ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակոբի վանքը և արծաթեայ սկիհ մը բերած է իբր յիշատակ։ ՄՁ. Թ. 12 ճաշոցին վերջը կը գտնուի հետևեալ յիշատակարանը, զոր նոյնութեամբ հոս կը դնենք. «Դարձեալ աղաչեմ զձեզ յիշեցէք ի Քս. զտէր Սարգիս եպս.ի մայրն զՓաշամելէք Եզընկայեցի. որ եկի յԵմս. և բերի արծաթի սկիհ մը. և եդի ի Ս. Յակոբս. յիշատակ ինձ և որդւոցն իմոյ. Ռոստակէսին և Խաւձին. և Ռոլզղու Մելիքին։ Եւ եթէ ոք յանդըգնի, կամ ծախէ. կամ գրաւ դնէ կամ հանէ. նա զպատիժն զՅուդային առցէ. և զԿայէնին։

Գրեցաւ ի թվ. ՋԺ (=1461) ի հայր. տէր Կարապետին. և յեպիսկոպոսութեան տէր Պետրոսի . . . ամէն»։

ՓԱՐԱԽՈՆ ՎՐԴ. ԹՈԽԱՏՑԻ.— Մբ. Նւ. Գանձակի, ուր վախճանած է 1786ին և թաղուած է տեղւոյն Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցիին գաւիթը (Ազգր. Հան. Գիրք. Ե. Ջ. էջ 300)։

ՓԱՐԻՍ (Տիկին) Յ. ԱԼԻՔՍԱՆԵԱՆ, ԴՈՒՍՏՐ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՑԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ.— 1869ին կը շինէ կտակ մը Եգիպտոսի մէջ և իր տան կահ կարասիքը կը կտակէ Ս. Յակոբի վանքին և փափաք կը յայտնէ որ նոյն կարասեաց արդիւնքովը, Երուսաղէմի պատրիարքին հաւանութեամբ, կալուած մը առնուի և վագֆ ըլլայ ու եկամուտը յատկացուի Ս. Յակոբի վանքի աղքատներուն, նորոգութիւններու և այլ ծախքերը վճարելէ վերջ, կտակակատար կը կարգուի Զմիւռնիացի Յակոբ Գասպարեան։ Տիկին Փարիս կը վախճանի Աղեքսանդրիոյ մէջ 1870ին (Սիոն, 1870, էջ 136—37 և 159—162)։

ՓԻԼԻՊՊՈՍ ԵՊՍ. ԽՈՒՆՃԱՐԵԱՆՑ ԿԱՄ ՆԱՃԱՐԵԱՆՑ, ԲԱԳՈՒՑԻ.— Մբ. Աւազանի անունը Յարութիւն. Ձռ. 1857ին. ՏՓ. 1861ին. ՏԲ. 1863ին. բ. անգամ ՏԲ. 1866ին. կը հրաժարի